ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՄԱՐՏԻ 2025 թվականի N 0405-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 5-Ի ԹԻՎ 0324-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով,Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով, 50-րդ և 51-րդ կետերով, ,«Նորմատիվ իրավական ակտերի»մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասովՀայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 11-րդ կետերով և 13-րդ կետի <<ա>> և <<բ>> ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի <<Շինությունների նպատակային նշանակության դասակարգման ցանկը սահմանելու մասին>> N600-Ն որոշման 1-ին հավելվածի 1-ին , 2-րդ, 4-րդ կետով, հաշվի առնելով ,որ Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի գյուղ Հացիկ,16 փողոց ,32 հողամասում գտնվող կառույցները իրականացվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով , չեն առաջանում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի , այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օտարման գոտիներում և հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին , հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2023թ.-ի դեկտեմբերի 21-ի թիվ 10 նիստի 136-Ն որոշումը, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2024թ. նոյեմբերի 29-ի թիվ 131-Ն որոշումը ,Հայկ Կորյունի Հովհաննիսյանի 27.02.2025 թվականի թիվ 1148 դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Սեփականության իրավունքով Հայկ Կորյունի Հովհաննիսյանին (ծնվ. 27.10.1975թ.),Հայկանուշ Հայկի Իսրաելյանին (ծնվ. 01.10.1953թ.) և Կորյուն Կառլենի Հովհաննիսյանին (ծնվ. 16.04.1950թ.) սեփականության իրավունքով պատկանող

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի գյուղ Հացիկ 04-058-0044-0045 կադաստրային ծածկագրում գտնվող 0.0945 հա օրինական հողամասի վրա կառուցված 62,1 քմ ներքին և 75,0 քմ արտաքին մակերեսով խանութը, 55,2 քմ մակերեսով ներքին և 66,3 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը,60,3 քմ ներքին և 79,7 քմ արտաքին մակերեսով մառան-խորդանոցը,1,3 քմ ներքին և արտաքին մակերեսով պարիսպը ճանաչել օրինական, իսկ ծածկոցները, զուգարանը,ծխարանները և պարիսպը համարել ինքնակամ:

2. Ընդունել ի գիտություն , որ

1) կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:

2) շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3.Սահմանել, որ ինքնակամ կառույցն իրականացրած անձը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում , Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի բյուջե պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<ինքնակամ հառույցների օրինականացամն և տնօրինման կարգը հաստատելու մասին >> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով հաշվարկված ընդհանուր արտաքին 75,0 քմ մակերեսով ինքնակամ բնակելի շինությունների օրինականացման յուրաքանչյուր քառակուսի մետրի համար՝ բազային տուրքի 20-ապատիկի չափով՝ 1748 ՀՀ դրամ ընդհանուր՝ 131100 (մեկ հարյուր երեսունմեկ հազար հարյուր) ՀՀ դրամ,ընդհանուր արտաքին 79,7 քմ մակերեսով ինքնակամ բնակելի շինությունների օրինականացման յուրաքանչյուր քառակուսի մետրի համար՝ բազային տուրքի 15-ապատիկի չափով՝ 1311 ՀՀ դրամ ընդհանուր՝ 104487 (մեկ հարյուր չորս հազար չորս հարյուր ութսունյոթ) ՀՀ դրամ և ընդհանուր արտաքին 67,6 քմ մակերեսով ինքնակամ օժանդակ շինությունների օրինականացման յուրաքանչյուր քառակուսի մետրի համար՝ բազային տուրքի 6-ապատիկի չափով՝ 524,4 ՀՀ դրամ ընդհանուր՝35450 (երեսունհինգ հազար չորս հարյուր հիսուն) ՀՀ դրամ, ընդամենը՝ 271037 (երկու հարյուր յոթանասունմեկ հազար երեսունյոթ) ՀՀ դրամ:

4. Ուժը կորցրած ճանաչել ինքնակամ կառույցն օրինականացնելու 2025 թվականի մարտի 5-ի թիվ 0324-Ա որոշումը:

5. Սույն որոշումը Հայաստանի Հանրապետության Օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՐԳՍՅԱՆ**

2025թ. մարտի 18
ք. Արմավիր